ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Vayk - 3801 Shahumyan 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

30 ՀՈՒՆԻՍԻ 2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 85

ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վայք քաղաքի Ջերմուկի խճ. 69/3 հասցեում <<Ռոբեն Յ.Հ.>> ՍՊԸ-ն /տնօրեն Գ.Գևորգյան/ առանց համապատասխան փաստաթղթերի և թույլտվության ինքնակամ շինարարություն կատարելու համար վարչական տուգանք սահմանելուց հետո շարունակել է ինքնակամ շինարարությունը, չի կատարել Վայք համայնքի ղեկավարի 09.04.2021թ. թիվ 64 որոշման 4-րդ կետի պահանջը, որը կրկին առաջացրել է վարչական պատասխանատվություն <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> ՀՀ օրենքի 154-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենքի 11-րդ և 28-րդ հոդվածներով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> ՀՀ օրենքի 154-րդ հոդվածի 2-րդ մասով և 219.1 հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. <<Ռոբեն Յ.Հ.>> ՍՊ ընկերության /տնօրեն Գ.Գևորգյան/ կողմից ինքնակամ շինարարական աշխատանքներ կատարելու համար <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով վարչական տուգանք սահմանելուց հետո շինարարական աշխատանքներ կատարել շարունակելու համար, ընկերության նկատմամբ սահմանել վարչական տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկու հազար հինգ հարյուրապատիկի չափով /երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ/,
2. Վարչական տուգանքի գումարը ենթակա է վճարման Վայքի համայնքապետարան 900345101407 հաշվին, որոշումը ստանալու օրվանից 10 օրվա ընթացքում:
3. Սույն որոշման օրինակն ուղարկել <<Ռոբեն Յ.Հ.>> ՍՊ ընկերությանը /տնօրեն Գ.Գևորգյան/:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Թ. ԱՎԵՏՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Vayk - 3801 Shahumyan 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

01 ՀՈՒԼԻՍԻ 2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 86

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021Թ. ՄԱՅԻՍԻ 4-Ի «ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՎԱՅՔ ՔԱՂԱՔԻ ՋԵՐՄՈՒԿԻ ԽՃՈՒՂՈՒ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,09332 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 68 ՈՐՈՇՈՒՄՆ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածով, և հաշվի առնելով այն հանգամանքը, որ գրանցման ներկայացված հողամասից 0,08482 հա-ը ըստ կադաստրային քարտեզի հանդիսանում է պետական սեփականության անտառային հող՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Անվավեր ճանաչել Վայք համայնքի ղեկավարի 2021թ. մայիսի 4-ի «ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՎԱՅՔ ՔԱՂԱՔԻ ՋԵՐՄՈՒԿԻ ԽՃՈՒՂՈՒ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,09332 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 68 որոշումը:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Թ. ԱՎԵՏՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Vayk - 3801 Shahumyan 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

02 ՀՈՒԼԻՍԻ 2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 87

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2005Թ. ՕԳՈՍՏՈՍԻ 29-Ի «ՎԱՅՔ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ԱՐՄԵՆ ՄԱՔՍԻՄԻ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ ՏԱՐԱԾՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 43 ՈՐՈՇՈՒՄՆ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՎԱՅՔԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՄԵՆ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ՄԻՋԵՎ ԿՆՔՎԱԾ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածով, և հաշվի առնելով այն հանգամանքը, որ 06.09.2015 թվականին լրացել է Վայքի քաղաքապետարանի և քաղ. Արմեն Մարգարյանի միջև կնքված թիվ 538 հողամասի վարձակալության պայմանագրի ժամկետը, ինչպես նաև 2012թ. նոյեմբեր ամսից մինչև օրս չի վճարել պայմանագրի 3-րդ գլխի 8-րդ կետում նշված 4000 դրամ վարձավճարը,Հիմք ընդունելով Վայքի քաղաքապետարանի և քաղ. Արմեն Մաքսիմի Մարգարյանի միջև 06.09.2005թ. կնքված վարձակալության պայմանագրի 6-րդ գլխի 20.1 կետը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Անվավեր ճանաչել Վայք համայնքի ղեկավարի 2005թ. օգոստոսի 29-ի «ՎԱՅՔ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ԱՐՄԵՆ ՄԱՔՍԻՄԻ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ ՏԱՐԱԾՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 43 որոշումը:
2. Միակողմանի լուծել Վայքի քաղաքապետարանի և քաղ. Արմեն Մաքսիմի Մարգարյանի միջև 06.09.2005թ. կնքված վարձակալության պայմանագիրը:
3. Սույն որոշման օրինակը ուղարկել ՀՀ կադաստրի կոմիտե:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Թ. ԱՎԵՏՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Vayk - 3801 Shahumyan 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

08 ՀՈՒԼԻՍԻ 2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 88

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021Թ. ՀՈՒՆԻՍԻ 25-Ի «ՎԱՅՔ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ՄԵԽԱԿ ՄՅԱՍՆԻԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 81 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ կետերով,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Վայք համայնքի ղեկավարի 2021թ. հունիսի 25-ի «ՎԱՅՔ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ՄԵԽԱԿ ՄՅԱՍՆԻԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 81 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.
   - որոշման մեջ նշված 4-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ <<սույն որոշման 1-ին կետում նշված 0,04 հա հողատարածքից ավել օգտագործվող 0,0343 հա հողատարածքը հետ վերցնել>>
   - որոշման մեջ նշված 4-րդ կետի <<4>> թիվը փոխարինել <<5>> թվով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Թ. ԱՎԵՏՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Vayk - 3801 Shahumyan 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

08 ՀՈՒԼԻՍԻ 2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 89

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021Թ. ՀՈՒՆԻՍԻ 11-Ի «ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱԶԱՏԵԿ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 4,00406 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՎԱՐԵԼԱՀՈՂԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 79 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ կետերով,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. **Վայք համայնքի ղեկավարի 2021թ. հունիսի 11-ի «ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱԶԱՏԵԿ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 4,00406 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՎԱՐԵԼԱՀՈՂԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 79 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.**

- **որոշման վերնագրում և 1-ին կետում նշված <<համայնքի սեփականություն հանդիսացող>> արտահայտությունը փոխել <<Հայաստանի Հանրապետության սեփականություն>> արտահայտությունով:**

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Թ. ԱՎԵՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Vayk - 3801 Shahumyan 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

08 ՀՈՒԼԻՍԻ 2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 90

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՓՈՌ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 2,64832 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՐՈՏԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, 97-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2006թ. մարտի 9-ի թիվ 391-Ն որոշումը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Վայք համայնքի սեփականություն հանդիսացող Փոռ գյուղում գտնվող գյուղատնտեսական նպատակային նշանակության 2,64832 հա արոտը ճանաչել որպես առանձին միավոր:
2. Դիմել ՀՀ կադաստրի կոմիտեին՝ սեփականության իրավունքի գրանցման վկայական ստանալու համար:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Թ. ԱՎԵՏՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Vayk - 3801 Shahumyan 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

08 ՀՈՒԼԻՍԻ 2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 91

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՓՈՌ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 2,74212 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՐՈՏԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, 97-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2006թ. մարտի 9-ի թիվ 391-Ն որոշումը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Վայք համայնքի սեփականություն հանդիսացող Փոռ գյուղում գտնվող գյուղատնտեսական նպատակային նշանակության 2,74212 հա արոտը ճանաչել որպես առանձին միավոր:
2. Դիմել ՀՀ կադաստրի կոմիտեին՝ սեփականության իրավունքի գրանցման վկայական ստանալու համար:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Թ. ԱՎԵՏՅԱՆ**